

In this article the binding role of the connective word “when” expressing syntactic dependence between compound sentence components is considered. It is noted that besides the connection of the adverbial clause of time with the principal clause, it also connects attributive, object, conditional and causal subordinate clauses expressing semantic shades of time.

**ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРИЗАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

1(25) 2012

ՀՏՏ 800.87 (479.249)

Հայոց լեզու, բարբառագիտություն

**ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՕՐԻՆԱԶԱՓՈԽԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՊԱՆՄԱՆ
ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԸ ԲԱՆԱՀՅԱՎԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ
(ՂԱՐԱԲԱԴԻ ԲԱՐԲԱՌԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Ա.Յու. Սարգսյան

Լեզուն մտածողության ձև է և մտածողության նյութական դրսևորման միջոց: Եվ քանի որ բարբառը լեզվի տարածական դրսևորումն է, ուստի այն դառնում է տվյալ տարածքի հանրության մտածողության դրսևորման միջոցը: Բարբառային մտածողությունը այդ առումով ոչ միայն բանահյուսական լեզվական արտաքին միջոցը, այլև նրա ներքին պահանջն ու էույթունն է: Բանահյուսական նյութերի գրառման ժամանակ խիստ անհրաժեշտ է բարբառային օրինաչափությունների պահպանումը, ինչը արտահայտում է ոչ միայն ազգագրական տվյալ շրջանի խոսվածքի առանձնահատկություններն, այլև այդ տարածքի հայերի լեզվամտածողությունը, նրանց նիստն ու կացը, կենսափիլիստփայությունը: Այլապես բանահյուսական նյութը գրկվում է իր համ ու հոտից՝ ներկայանալով որպես բովանդակային միավոր:

Դժբախտաբար, պետք է ասն, որ հայ բանահյուսության մեջ հաճախ է անտեսվել այդ հանգամանքը՝ բանահյուսական բազմաթիվ ժողովածուներ տվյալ բարբառի ուսումնահրման համար դարձնելով ոչ հուսալի աղբյուր: Հարցը մեկնաբանելու համար ներկայացնենք Ղարաբաղի բանահյուսական ժողովածուների դրվագը:

Ակաած 1960-ական թվականների սկզբից, երբ Բահաթրյան ներքայինները Շուշու և հարևան գյուղների բնակիչներից հայ իրականության մեջ առաջինը զրատնեցին հայկական հեքիաթներ, մինչև օրս Ղարաբաղի տարբեր բնակավայրերից բանահյուսական նյութեր են հավաքագրել ու հրատարակել մի շարք բանահավաքներ՝ իրենց հայրենանվեր գործունեությամբ փրկելով դրանք կորստյան վտանգից: Հիշատակելի են Մակար Բարխուդարյանի «Պըլը Պուղի» (1883), «Բարյական առածներ» (1898), Սարգսի Խրայնելյանի «Ղարաբաղի զվարճախոս» «Պըլը Պուղին»» (1956), Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի «Լեռնային Ղարաբաղի բանահյուսություն» (1971), Միքայել Առաքելյանի և Ռոբերտ Ղահրամանյանի «Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից» (1978), Ալվարդ Ղազիյանի «Արցախ» (Կայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15, 1983), Լևոն Հարությունյանի «Նշխարներ Արցախ» բանահյուսության» (I մաս, 1991, II մաս, 2004, III մաս, 2007) և մի շարք այլ ժողովածուներ: Առանձնակի արժեք են ներկայացնում. «Հայ ժողովրդական հեքիաթներ» բազմահատորյակի V, VI, VII հատորները, որտեղ ընդգրկված են Մ.Գրիգորյան-Սպանդարյանի (V հ.), Միքայել

Առարելյանի (VI h.), Բահաթրյան նորայրների (h. VII) և այլոց՝ Ղարաբաղի տարածքից գրառած հերթափնտը: Նշվածներից Մ.Քարլսուդարյանի ժողովածուների լեզուն մեծապես տարբերվում է Ղարաբաղի բարբառի այժմյան վիճակից, իսկ Ս.Էսրայելյանը իր ժողովածուն հրատարակել է գրական հայերենով:

Մյուս ժողովածուները տարբերվում են բարբառային օրինաչափությունների կանոնների պահպանման աստիճանով:

Սակայն բոլոր այդ ժողովածուները հրատարակվել են բարբառային օրինաչափությունների աղավաղումներով, որոնք հանդես են զալիս լեզվական տարբեր մակարդակներում՝ հնչյունաբանական, բառապաշարային, ձևաբանական, շարահյուսական, ոճաբանական:

Հնչյունաբանական աղավաղումների գլխավոր պատճառը թերևս բարբառային տառադարձության խախտումներն են:

Հայտնի է, որ Ղարաբաղի բարբառում, բացի գրական հայերենի հնչյուններից, լայն գործածություն ունեն նաև **ա**, **օ**, **ու**, **գ**, **կ**, **թ**, **լ** հնչյունների քմային տարբերակները և **՛** երկրարբառակերպը, որոնք անկախ հնչույթներ են, իսկ մի շարք խոսվածքներում հանդիպում են **դ**, **տ**, **թ**, **ծ**, **ծ**, **ց**, **ծ**, **չ** հնչյունների քմային տարբերակները և **՛** երկրարբառակերպը, մինչդեռ դրանք ոչ միշտ են իրենց արտահայտությունը գտնել վերոհիշյալ ժողովածուներում՝ փոխարինվելով գրական հայերենի համապատասխան ոչ քմային բաղաձայններով, իսկ **՛**-ն ու **՛**-ն՝ **՛**-ով:

Որոշ ժողովածուներում (հատկապես Ա. Ղազիյանի) հանդիպում ենք **ֆ** բաղաձայնի գործածությանը, որը բացակայում է բարբառի հնչյունական համակարգի՝ փոխարինվելով **վ-ով**: Հաճախակի են նաև գրաբարյան ծայներ պայթականների և կիսաշփականների պահպանման դեպքերը, չնայած բարբառի բնիկ հայերեն բառերում դրանք ընդհանուր առմամբ վեր են ածվել խուլերի, ինչն էլ իհմբ է տվել Ա.Ղարիբյանին՝ Ղարաբաղի բարբառը դասելու երկաստիճան ծայնեղագործիկ բարբառների շարքին: Հարկ է նշել նաև, որ ոչ միշտ է պահպանված զադանավանկը **՛** տառադարձումը:

Բառապաշարային մակարդակում բարբառային օրինաչափությունների աղավաղումները հիմնականում պայմանափորված են բարբառային և փոխառյալ բառերի փոխարեն գրական լեզվի բառերի գործածությամբ: Ժողովածուներում հաճախ ենք հանդիպում քազմաթիվ գրական բառերի, որոնք բարբառում ընդհանրապես գործածական չեն, ինչպես՝ **անզտմ**, **բոլորովին**, **գեղեցիկ**, **գուցել**, **երիտասարդ**, **զարթնել**, **թեկուց**, **հետո**, **ձկնորս**, **սեղան**, **սրամիտ**, **փողոց** և այլն:

Քիչ չեն նաև թերականական օրինաչափությունների խախտումները: Գրեթե բոլոր ժողովածուներում նկատելի են բացառական և զորդիական հոլովածների գրականաձև գործածություններ, մինչդեռ բարբառում համատարած բացառականը կազմվում է ոչ թե **-ից**, **-ուց**, այլ **-ան**, իսկ զորդիականը՝ ոչ թե **-ով**, այլ **-ավ** վերջավորությամբ:

Բարբառում դասական թվականները ստվորաբար կազմվում են փոխառյալ **-ինջի** ածանցով, սակայն բանահավաքները շատ դեպքերում նախապատվությունը տալիս են զրական հայերենի **-բորդ**, **-երորդ** ածանցներով կազմություններին, որոնք Ղարաբաղի խոսվածքներում ունեն հազվադեպ գործածություն:

Հաճախակի են օժանդակ բայի լեզակի նրբորդ դեմքի **է-ով** կազմությունները, մինչդեռ բարբառում պետք է լինի **առ ասաց առ խըմու առ**:

Գրականացման արդյունք է նաև **առանց** կապի տրականով հոլովառությունը, մինչդեռ բարբառում օրինաչափ է ուղականով հոլովառություն՝ **առանց տղուա, առանց մարթ, առանց հար**:

Նման աղավաղումները, մեր կարծիքով, պայմանափորված են մի շարք գործոններով.

1. Բանահավաքները, կարևորելով բանահյուսական նմուշների բովանդակային կողմը և բարբառի գիտական բնույթը նպատակ չհամարելով, առաջնորդիվ են բանահյուսական ժառանգությունը ընթերցող լայն շրջաններին հասու դարձնելու սկզբունքով: Այդ մասին նշված է որոշ ժողովածուների առաջաբաններում և ծանոթագրություններում:

2. Բանահավաքները, բավարար չափով չտիրապետելով տվյալ խոսվածքի նրբություններին, դրանք հարմարեցրել են զրական հայերենի կամ մայրենի խոսվածքի առանձնահատկություններին: Թերևս բազմաթիվ նյութեր գրառվել են վերոհիշելով, որի դեպքում գրառողը հանդես է նկել նաև որպես բանասաց:

3. Հաճախ նյութը հնչյունաբերականական օրինաչափությունների խախտումներով են ներկայացնում նաև բանասացներ՝ ձգտելով այն գրականացնել:

4. Որոշ դեպքում էլ խախտումների պատճառները տեսնիկական են՝ պայմանավորված բարբառային տառադարձությամբ նյութերի տպագրության դժվարություններով:

Այսպիսով, բանահավաքչական գործընթացում խիստ անհրաժեշտ է բանագնտքանահավաք-բարբառագնուի համատեղ աշխատանքը, ինչը հնարավորություն կտա հստակորեն ներկայացնել նյութը՝ բարբառը ծառայեցնելով բանահյուսությանը և հակառակը: Ներկա դարաշրջանում առավել, քան երբեմ, դա կարևոր է, քանի որ հայերենի բարբառները գտնվում են վերացման եզրին, և դրանց հետագա ուսումնասիրությունները գերազանցապես պետք է հիմնված լինեն գրառված նյութերի վրա:

Գրականություն

1. Աղելա (Սարգսյան Ա.), Սընթրը լիգնա, լափու վա տամ, Ստեփանակերտ, 2003:
2. Բարխուդարյանց Գ., Բարոյական առածներ, Թիֆլիս, 1898:
3. Բարխուդարյանց Մ., Պըլը Պուղի, Թիֆլիս, 1883:
4. Դադյան Խ., Դադյան Ա., Վարանդայի ժողովրդական գրականությունից, «Ազգագրական հանդես», գգ. 17, 18, 19, Թիֆլիս, 1908-1910:
5. Իսրայելյան Ա., Ղարաբաղի զվարճակոս Պըլը Պուղին, Երևան, 1956:
6. Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրի պատրաստումը և ծանոթագրությունները Մ. Գրիգորյան-Սպանդարյանի), Երևան, 1971:
7. Հայ ժողովրդական հերիածներ, հ. 5, 6, 7, Երևան, 1966, 1973, 1979:
8. Ղազիյան Ա., Արցախ, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 15, Երևան, 1983
9. Ղահրամանյան Կ., Օջախի գիրք. Նշխարներ, Երևան, 1978, Ն 9:
10. Ղարաբաղի ժողովրդական ջրօրինյաց նրգերից (գրի առավ Դ.Վ.), «Արարատ», 12, Վաղարշապատ, 1895:
11. Մելիք-Շահնազարյան Կ., Առակներ Ղարաբաղի բարբառվ, «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1930:
12. Մելիք-Շահնազարյան Կ., Հանձնուկներ Ղարաբաղի լեզվով, «Հանդես ամսօրյա», 1932
13. Մելիք-Շահնազարյան Կ., Տմբլաչի Խաչան, (Չուռնա-տմբլա), գիրք Ա-Բ, Վաղարշապատ, 1907-1908:
14. Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից (կազմողներ՝ Մ., Առաքելյան, Ռ., Ղահրամանյան), Երևան, 1978:
15. Նշխարներ Արցախի բանահյուսության (ժողովնեց, կազմնեց և ծանոթագրեց Լ. Հարությունյանը), Երևան, 1991, 2-րդ մաս, Ստեփանակերտ, 2004, 3-րդ մաս, Ստեփանակերտ, 2007:

Важность сохранения диалектических закономерностей в фольклорных сборниках
(на примере Карабахского диалекта)

А.Ю.Саргсян

Резюме

В статье представлены нарушения диалектических закономерностей в фольклорных сборниках на примере Карабахского диалекта. Автор подчеркивает важность сохранения диалектических закономерностей, в частности транскрипции в фольклорных сборниках, что обеспечит надежность подобных источников при исследовании армянских диалектов. Одновременно рассматриваются факторы, обуславливающие искажения диалектических закономерностей.

The importance of preserving dialectal regularities in folklore collections
(on the example of Karabagh dialect)

A.Yu.Sargsyan

Summary

The article presents breaches of dialectal regularities in folklore collections on the example of Karabagh dialect. The author considers importance of preserving dialectal regularities, in particular preverving transcription in folklore collections, which will result in trustfulness of similar collections in the study of Armenian dialects. Simultaneously, the article regards the factors determining the distortion of dialectal regularities.